

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

Գաղութահայ կյանքի մեջ ստեղծված են շատ մը կարևոր խնդիրներ, որոնք որոշ ազդեցություն և կապակցություն ունին մեր ժողովուրդի ապահովության և խաղաղ զարգացման հետ։ Ամերիկահայ ազգային խորհուրդս, իբրև սփյուռքահության միասնության նվիրված մարմին մը, ընդգրկած ծրագրին համաձայն անհրաժեշտ նկատեց ծագած այդ հարցերու մասին մամուլի տրըված պարբերական հաղորդագրությունններու միջոցավ իր խոսքն ըսել և իր թելադրանքները տալ Ազգային խորհուրդի տեղական մարմիններուն և ժողովուրդին։

Ներկայիս գաղութահայությունը հուզող կարևոր խնդիրն է Հայ Եկեղեցին պառակտելու վնասակար փորձերը ծանոթ խմբակի մը կողմե․

Եկեղեցական և ժողովրդական կանոններու հակառակ Անթիլիասի ապօրինի «կաթողիկոս»-ի ներկայացուցիչ և դավի ընկեր Խորեն եպիսկոպոս Բարոյան Ամերիկա եկած է։ Ան քաղաքե քաղաք շրջելով Դաշնակցության սովորական որոմնացանի դերը կկատարե։ Ան կջանա վարկաբեկել Հայոց նվիրական Էջմիածինը օտարներու առաջ։ Ան կաշխատի այնպես հավատացնել, թե՝ ամերիկահայ առաքելական եկեղեցիներու մեծամասնությունը Էջմիածնեն անջատված, իրենց կողմն են անցեր․ ինչ որ բացարձակ սուտ մըն է արդեն, և բոլորովին անվայել հայ եկեղեցականի մը դիրքին ու աստիճանին։

Ազգային Եկեղեցվո դեմ մղվող այս անամոթ խաչակրության աղդու պատասխանը տված է արդեն վերջերս Ռեյսինի մեջ գումարված՝ Էջմիածնի հավատարիմ Առաքելական Եկեղեցիներու պատգամավորներու թեմական համագումարը։ Այս համագումարը իր ամուր կեցվածքով և Էջմիածնի հանդեպ ցուցադրած անպայման վստահությամբ շառաչուն ապտակ իջեցուց դաշնակ պառակտիչներու և անոնց գործիք դարձած ուխտադրուժ «եկեղեցական»-ներու երեսին։

Մեր նվիրական ու պատմական Էջմիածինը դարավոր փոթորիկներե անցած, դաժան բռնավորներ է տեսած։ Լենկթիմուրի, Ջինգիզխանի, Շահ Աբբասի պես մարդիկ եկեր ու անցեր են մեր երկրեն, բայց մեր Էջմիածինը մնացեր է միշտ ամուր և անսասան։

Այսօր ալ օտարներու իրենց հոգին ու խիղճը ծախած հայանուն խմբակի ժամանակավրեպ փորձերը անմիտ ու ապարդյուն պիտի մնան, ինչպես եղավ մոտ կես դար առաջ, նույն դավադիր հոսանքին կողմե հնարված հայ եկեղեցիները ակումբներու աստիճանին իջեցնելու— բաց ու գոցի խնդիր։

Այսուհանդերձ, Ազգային խորհուրդի տեղական մարմիններն ու անդամները, աչալըրջությամբ հետևելու են, որ երբ պառակտիչ հոսանքը պաշտոնական հաղորդագրություններ տա տեղական թերթերուն մեջ Էջմիածնի դեմ, Խորհրդի տեղական մարմինները հերքեն այդ սուտերն ու զրպարտությունները, խորհրդակցելով իրենց շրջապատի հասարակական ծանոթ անձնավորություններու հետ․ նույն թերթերու ուղղված փոխադարձ գրություններով մերկացնելու են դաշնակիզմի կատարած հակակրոն դերը և անկարգապահ ու կործանարար եկեղեցականները։

բու էջմիածնի հեղինակության դեմ գործած ամոթալի դավաճանությունը։

Հայ Եկեղեցին ոչ մեկ կուսակցության և կազմակերպության չի պատկանիր։

Ան սեփականությունն է ամբողջ հայ ժողովուրդին, անոր ազգային տունն է ան, անոր գոյության բերդն ու սրբությունը՝ իրեն կեդրոն ունենալով էջմիածնի Մայր Աթոռը։ Հավատավոր ամեն հայ պարտավոր է պայքարի դաշտ իջնել, երբ վտանգ կսպառնա Հայաստանյայց Եկեղեցիին։ ինչպես եղավ վարդանանց շրջանին։

Եվ ո՛չ միայն անհատներ, այլ կազմակերպություններ, հայրենակցական միություններ, իրենց վարչական կազմի անունով և պաշտոնական գրություններով, պետք է ետ շպրտեն էջմիածնի դեմ եղած ամեն շարախոսություն և բամբասանք։

Պետք է միշտ անխախտ պահել հավատքը մեր դարավոր էջմիածնին և անոր արժանավոր Գահակալին, Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին հանդեպ։

Այս ըլլալու է մեր կարգախոսը։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

(Բեյրութ, «ԱՐԱՐԱՏ» օրաթերթ, 15 մայիսի 1958 թ.)